ԿԱՐԾԻՔ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Գագիկ Զարմավիրի Բաղդասյանի «Տարածքային համաչափ զարգացման քաղաքականության հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայով ատենախոսության վերաբերյալ ներկայացված Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Տարածքային զարգացման անհամաչափությունները մեծագույն հիմնախնդիր են աշխարհի բոլոր երկրների համար: Այդ անհամաչափությունները հանգեցնում են երկրի զարգացման հնարավորությունների սահմանափակման և ստեղծում առաջընթացի խոչընդոտներ:

Այս պարագայում տարածքային միավորների զարգացման մակարդակների միջև առկա անհամաչափությունների վերացմանն ուղղված գործիքների կիրառումն ու գործընթացների կազմակերպումն անհրաժեշտություն են: Գործիքները, գործընթացները և մոտեցումները ամբողջանում են յուրաքանչյուր երկրում իրականացվող տարածքային քաղաքականությունում:

Տարածքային քաղաքականությունը, լինելով պետական կառավարման մարմնի կողմից իրականացվող ծրագրերի բաղկացուցիչ, պետք է միտված լինի չեզոքացնելու տարածքային զարգացման անհամաչափություններին նպաստող գործոնները և պետք է միտված լինի տարածքային միավորների անհամաչափ զարգացման հետևանքների վերացմանը:

Խնդիրը հատկապես հրատապ է այն երկրներում, որոնք զարգացած չեն, և որոնց տարածքային զարգացման անհամաչափությունները տարեցտարի ընդլայնվում են: Նման պարագայում, բնականաբար, տարածքային համաչափ զարգացմանն ուղղված արդյունավետ քաղաքականության իրականացումը ստանում է անհամեմատ բարձր կարևորություն:

Եվ հենց այս դեպքը վերագրելի է նաև Հայաստանի Հանրապետությանը, քանի որ

1. Հայաստանի Հանրապետությունը չունի զարգացած տնտեսություն,
2. Հայաստանի Հանրապետությունում տարածքային զարգացման անհամաչափությունները բավականին բարձր են,
3. Հայաստանի Հանրապետությունում տարածքային զարգացման անհամաչափությունները տարեցտարի խորանում են:

Այս դեպքում իրապես առկա է անհրաժեշտություն իրականացնելու ՀՀ տարածքային համաչափ զարգացմանն ուղղված քաղաքականության ուսումնասիրություն, ՀՀ տարածքային զարգացման անհամաչափությունների վերլուծություն և գործուն կառուցակարգերի մշակում, որոնք ուղղված կլինեն բարձրացնելու ՀՀ տարածքային համաչափ զարգացման քաղաքականության արդյունավետությունը:

Ատենախոսության նպատակն ու խնդիրները

Ատենախոսության մեջ հեղինակի կողմից **նպատակ** է դրվել գնահատել ՀՀ տարածքային զարգացման անհամաչափությունների ներկայիս մակարդակը, դուրս բերել ՀՀ տարածքային քաղաքականության հիմնախնդիրները և առաջ քաշել կառուցակարգեր, որոնք կարող են նպաստել ՀՀ տարածքային քաղաքականության կատարելագործմանը և հիմնախնդիրների լուծմանը:

Հետազոտության նպատակի իրականացման համար հեղինակի կողմից առաջադրվել են հետևյալ **խնդիրները**.

- ուսումնասիրել տարածքային զարգացման և տարածքային քաղաքականության էությունը և հիմնական առանձնահատկությունները,
- մշակել մոդել, որի կիրառմամբ, վիճակագրության առկայության պայմաններում, հնարավոր կլինի դինամիկ կերպով չափել տարբեր երկրների տարածքային զարգացման անհամաչափությունների աստիճանը, ինչպես նաև կիրառել նշյալ մոդելը մի շարք երկրների համար,
- ուսումնասիրել տարածքային զարգացման անհամաչափությունների միջազգային փորձը և առանձնացնել այն երկրները, որոնց տարածքային զարգացման անհամաչափություններն ունեն նվազման միտում, ինչը թույլ կտա նման հաջող փորձ ունեցող երկրների տարածքային քաղաքականությունների ուսումնասիրությամբ որոշակի տարրեր տեղայնացնել ՀՀ-ում,

- ուսումնասիրել ՀՀ տարածքային քաղաքականությունը, տարածքային զարգացման համապետական, մարզային և համայնքային ռազմավարություններն ու ծրագրերը՝ բացահայտելով դրանցում առկա հիմնախնդիրները և այն ուժեղ կողմերը, որոնց հիման վրա հնարավոր կլինի ապահովել քաղաքականության կատարելագործում,
- իրականացնել ՀՀ տարածքային զարգացման անհամաչափությունների գնահատում, որը կհիմնվի ինչպես ցուցանիշների դինամիկ և կառուցվածքային ուսումնասիրության, այնպես էլ մոդելային գնահատումների վրա,
- հետազոտել տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների շրջանակը և դրանց իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների աղբյուրները, ինչպես նաև գնահատել, թե որքանով են համայնքների ֆինանսական կարողությունները բխում ՀՀ-ում տարածքային համաչափ զարգացում ապահովելու գաղափարախոսությունից,
- մշակել կառուցակարգեր, որոնք կնպաստեն համայնքների ֆինանսական կարողությունների բարելավմանը, կհանգեցնեն ՀՀ-ում տարածքային համաչափ զարգացման քաղաքականության արդյունավետության բարձրացման և ուղղված կլինեն ՀՀ տարածքային զարգացմանը համաչափություն հաղորդելուն:

Ատենախոսության կառուցվածքը և հիմնական բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Այն շարադրված է 178 մեքենագիր էջերի վրա՝ առանց հավելվածների:

Ատենախոսության **ներածության** մեջ ներկայացված է թեմայի արդիականությունը, հետազոտության հիմնական նպատակը և խնդիրները, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, հետազոտության տեղեկատվական և տեսամեթոդական հիմքերը, ձևակերպված են ատենախոսության հիմնական գիտական արդյունքներն ու նորույթը, ներկայացված են աշխատանքի գիտական և գործնական կիրառման նշանակությունը, հետազոտության արդյունքների փորձարկումներն ու հրապարակումները:

Ատենախոսության առաջին՝ **«Տնտեսության տարածքային զարգացման հիմքերն ու հիմնական բնութագրերը»** գլխում անդրադարձ է կատարվել տարածքային համաչափ զարգացման էությանը և դրա տեսամեթոդական հիմքերին, ինչպես նաև տարածքային համաչափ զարգացման քաղաքականությանը և դրա ազդեցությանը երկրի սոցիալ-

տնտեսական զարգացման վրա: Այս գլխով հեղինակը իրականացրել է նաև տարածքային զարգացման քաղաքականության միջազգային փորձի ուսումնասիրություն, որի շրջանակներում մշակվել է տարածքային զարգացման անհամաչափությունների գնահատման մոդել: Մոդելը կիրառվել է 15 երկրներում տարածքային զարգացման անհամաչափությունները գնահատելու համար, որի արդյունքում առանձնացվել և ուսումնասիրվել են այն երկրների տարածքային քաղաքականությունները, որոնցում տարածքային զարգացման անհամաչափությունները ունեն նվազման միտում:

Ատենախոսության երկրորդ՝ **«ՀՀ տարածքային զարգացման հիմնական առանձնահատկությունները»** գլխում, հեղինակը նախ իրականացրել է ՀՀ տարածքային զարգացման ինստիտուցիոնալ հիմքերի ուսումնասիրություն, որով վերլուծվել են ինչպես ոլորտը կարգավորող իրավական ակտերը, այնպես էլ ՀՀ տարածքային համաչափ զարգացման ռազմավարությունը, մարզային զարգացման ռազմավարությունները և համայնքային զարգացման ծրագրերը: Այդ ուսումնասիրությամբ առաջ են քաշվել բազմաթիվ հիմնախնդիրները: Այնուհետև, Գագիկ Բաղադյանի կողմից իրականացվել է ՀՀ տարածքային զարգացման անհամաչափությունների գնահատում: Գնահատումը իրականացվել է ինչպես ցուցանիշների դինամիկ ու կառուցվածքային վերլուծությամբ, այնպես էլ հեղինակի կողմից մշակված թվով 2 մոդելին կիրառմամբ: Գլուխը ամփոփվել է ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման օրենսդրական և ֆինանսական կոորդինացման հիմնախնդիրների ուսումնասիրությամբ:

Ատենախոսության երրորդ՝ **«ՀՀ տարածքային համաչափ զարգացման քաղաքականության հիմնախնդիրները և դրանց հաղթահարման մոտեցումները»** գլխում հեղինակի կողմից մշակվել և ներկայացվել են ՀՀ տարածքային համաչափ զարգացմանն ուղղված ֆինանսական կառուցակարգեր (դոտացիաների հաշվարկման նոր մեթոդաբանություն, մասհանումների իրականացման մոդել), ինչպես նաև ներկայացվել են տարածքային զարգացման քաղաքականության կատարելագործման ուղիներ՝ հիմնված նախորդ գլխում առաջ բերված հիմնախնդիրների և միջազգային փորձով առաջարկվող գործիքների վրա:

«Եզրակացություններ» բաժնում համառոտ ներկայացվել են հետազոտության հիմնական եզրահանգումները և առավել առարկայական առաջարկները:

Ատենախոսության ստացված արդյունքների հավաստիությունն ու դրանց գիտագործնական նշանակությունը

Ատենախոսության շրջանակներում կատարված հետազոտության օբյեկտը ՀՀ տարածքային զարգացումն է՝ որպես գործընթաց և որպես համակարգ, իսկ հետազոտության առարկան ՀՀ տարածքային համաչափ զարգացման հիմնախնդիրներն են ու վերջիններիս լուծմանն ուղղված մոտեցումները:

Ատենախոսության համար տեսամեթոդական հիմք են հանդիսացել մի շարք հետազոտողների կողմից հրսպարակված նյութեր, հոդվածներ և գրքեր, ինչպես նաև ՀՀ մի շարք օրենսդրական և ենթաօրենսդրական ակտեր:

Ատենախոսության շրջանակներում կիրառվել են դինամիկ և կառուցվածքային վերլուծության, գործոնային վերլուծության, փորձագիտական գնահատման, ինդուկցիայի և դեդուկցիայի և այլ մեթոդներ: Ատենախոսությունը ներառում է 30 աղյուսակներ և 41 գծապատկերներ:

Հետազոտության համար տեղեկատվական աղբյուր են հանդիսացել ՀՀ և մի շարք այլ երկրների պաշտոնական վիճակագրական մարմինների, ինչպես նաև ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հրապարակումներ:

Ատենախոսության շրջանակներում ստացված արդյունքները կարող են նպաստել ՀՀ տարածքային համաչափ զարգացմանն ուղղված քաղաքականության կատարելագործմանը: Արդյունքները կարող են տեսագործնական կիրառություն ունենալ բոլոր շահագրգիռ կողմերի համար և կիրառվել ՀՀ կառավարության, ոլորտին առնչակից նախարարությունների, ՀՀ ՊԵԿ-ի, ՀՀ մարզպետարանների, ՏԻՄ-երի, այլ պետությունների, հետազոտողների և այլոց կողմից:

Ատենախոսության հիմնական գիտական արդյունքները և նորույթը

Ատենախոսության գիտական նորույթները, ըստ հեղինակի, հետևյալ հիմնադրույթներն են.

1. Սոցիալ-տնտեսական զարգացումը բնութագրող թվով 9 ցուցանիշների և փորձագիտական գնահատում-հարցումների հիման վրա մշակվել է երկրների տարածքային միավորների զարգացման ինդեքսների և տարածքային զարգացման անհամաչափությունների գնահատման մոդել, որը հեղինակի կողմից կիրառվել է

թվով 16 երկրների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության համար (2012-2021 թթ. տվյալներով):

2. ՀՀ տարածքային զարգացման անհամաչափությունների որակական և քանակական գնահատման համար հեղինակի կողմից մշակվել և առաջարկվել է մոդել, որը հիմնված է թվով 19 ցուցանիշների և SPSS վիճակագրական փաթեթի կիրառմամբ գործոնային վերլուծության վրա (2021 թ. տվյալներով):
3. ՀՀ համայնքների բյուջետային կարողությունների և զարգացման մակարդակների համապատասխանության բացահայտման նպատակով մշակվել է մեթոդաբանություն՝ հիմնված քվանտիլային խմբերի կիրառման ու արդյունքների համադրման վրա:
4. Մշակվել են համայնքների ֆինանսական կարողությունների և զարգացման մակարդակների համապատասխանության ապահովմանն ուղղված կառուցակարգեր, այդ թվում՝ ներկայացվել են դոտացիաների հաշվարկման և եկամտային հարկից ու շահութահարկից մասհանումների իրականացման մոդելներ, տրվել են դրանց արդյունավետության գնահատականները:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽԱՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Այնուամենայնիվ, ատենախոսությունը զերծ չէ նաև թերություններից, որոնք ամփոփվում են հետևյալ դրույթներում.

1. Ատենախոսության 1.3 «Տարածքային զարգացման քաղաքականության միջազգային փորձը» ենթագլխի առաջին կեսում հեղինակը ներկայացնում է տարածքային անհամաչափությունների գնահատման համար իր կողմից մշակված ինդեքսը, դրա մեթոդաբանությունն ու հաշվարկը՝ մի շարք երկրների ցուցանիշների հիման վրա: Այսպիսով, ինդեքսի մեթոդաբանությանը և հաշվարկին նվիրված բավականին ծավալուն հատվածը հակասում է առաջին գլխի տրամաբանությանը և չի համապատասխանում 1.3 ենթագլխի վերնագրին:

2. Տրամաբանության նմանատիպ անհամապատասխանություն առկա է նաև 2.1 «ՀՀ տարածքային զարգացման ինստիտուցիոնալ հիմքերը» ենթագլխում. վերնագիրը լիարժեքորեն չի արտացոլում այս բաժնում ներկայացված վերլուծական բաղադրիչը: Բացի

այդ, նույն ենթագլխում հեղինակն անդրադառնում է մարզերում սպառման, աշխատավարձների և զբաղվածության ցուցանիշներին՝ դրանցից հետո միայն անդրադարձ կատարելով բնակչության խտությանը, այն ինչ վերլուծության տրամաբանությունը պահանջում է հակառակ հերթականություն:

3. Տարածքային զարգացման անհամաչափության հաղթահարմանն ուղղված քաղաքականության մասին խոսելիս՝ հեղինակը հիմնական շեշտը դնում է պետական ֆինանսական միջոցների վրա՝ անտեսելով ներդրումային գրավչության բարձրացման միջոցով ներդրումային ռեսուրսների ներգրավման հնարավորությունների ստեղծումը՝ որպես տարածքային համաչափ զարգացումը խթանող գործոն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերոնշյալ դիտողությունները էապես չեն ազդում հետազոտության արժանիքների վրա: **Գագիկ Զարմավիրի Բաղդասյանի «Տարածքային համաչափ զարգացման քաղաքականության հիմնախնդիրները ՀՀ-ում»** թեմայով ատենախոսությունը կարող է որակվել որպես ինքնուրույն գիտական հետազոտություն, որտեղ առաջ են քաշվել ոլորտի կարևորագույն հիմնախնդիրներ և մշակվել ու առաջարկվել դրանց հնարավոր լուծումներ:

Հետազոտության հիմնական արդյունքները արտացոլված են ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից ընդունելի հանդեսներում տպագրված թվով 8 գիտական հոդվածներում, գիտաժողովի նյութերում հրապարակված թվով 1 հոդվածում և Scopus շտեմարանում ինդեքսավորված թվով 1 միջազգային հոդվածում: Հոդվածները ներկայացված են առաքված սեղմագրում:

Ներկայացված սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության հիմնական բովանդակությանը և արտացոլում դրա հիմնական և կարևորագույն դրույթներն ու արդյունքները:

Այսպիսով, **Գագիկ Զարմավիրի Բաղդասյանի «Տարածքային համաչափ զարգացման քաղաքականության հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայով ատենախոսությունը** համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների

տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ՝
ՀՌԿԿ-Հայաստան հիմնադրամի
Քանակական հետազոտությունների ծրագրի ղեկավար
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Ա.Գ. Ավետիսյան**

«10» հուլիսի 2024թ.

ԱՆԻ ԳՐԻԳՈՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՀՌԿԿ-Հայաստան հիմնադրամի
Վարչական գծով տնօրեն **Ա.Հ. Առաքելյան**

«10» հուլիսի 2024թ.